ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.03.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

ԹԻՎ ՍՑ-ԷՍ-2019/62

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.03.2019թ. թիվ 26/26/3661-19 գրությամբ «Սիթիդիզայն» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00877485/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 19.02.2019թ. թիվ 97 և 04.03.2019թ. թիվ 154 գրությունների հիման վրա, 20.02.2019թ. նախաձեռնել է «Սիթիդիզայն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ

գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. <u>Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը 19.02.2019թ. թիվ 97 և 04.03.2019թ. թիվ 154 գրություններով դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ, որ Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից 2019թ. փետրվարի 5-ին հրապարակվել է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/6/7/1» ծածկագրով ընթացակարգի հրավերը, որի հայտերի բացման նիստը տեղի է ունեցել 2019թ. փետրվարի 18-ին: Հայտերի բացման նիստի արդյունքում ընթացակարգի 2-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Սիթիդիզայն» ՍՊԸ-ն: Վերջինիս ուղարկվել է ծանուցում՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասով և հրավերով սահմանված որակավորումը հիմնավորող փաստաթղթեր ներկայացնելու նպատակով, ինչի համար սահմանվել է վերջնաժամկետ երեք աշխատանքային օր տևողությամբ /վերջնաժամկետ՝ 21.02.2019թ./:

Ս.թ. փետրվարի 19-ին «Սիթիդիզայն» ՍՊԸ-ի կողմից ստացվել է գրություն առ այն, որ նշված կազմակերպության հայտը կազմելիս տեղի է ունեցել սխալ, որի արդյունքում 1-ին և 2-րդ չափաբաժինների տեղերը խառնվել են: Ուստի «Սիթիդիզայն» ՍՊԸ-ն հրաժարվում է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/6/7/1» ծածկագրով գնման գործընթացի 2-րդ չափաբաժնի մասով իր հետագա մասնակցությունից:

«Սիթիդիզայն» ՍՊԸ-ի հայտը գնահատվել է անբավարար և մերժվել է»:

Պատվիրատուն՝ պատշաճ ծանուցված լինելով Բողոքներ քննող անձի մոտ կայանալիք նիստերի ժամանակացույցի վերաբերյալ՝ չէր ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

3. <u>«Սիթիդիզայն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը դիմել է «Սիթիդիզայն» ՍՊԸ-ին՝ հնարավորություն ընձեռելով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.03.2019թ. թիվ 26/26/3661-19 գրությամբ Բողոքներ քննող անձի մոտ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Ընկերության գրավոր դիրքորոշումը, սակայն վերջինիս կողմից որևէ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

Ընկերությունը՝ պատշաճ ծանուցված լինելով Բողոքներ քննող անձի մոտ կայանալիք նիստերի ժամանակացույցի վերաբերյալ՝ չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստերին:

4. <u>ՍՑ-ԷՍ-2019/62 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 06.03.2019թ. թիվ 26/26/3661-19 գրությունը և կից փաստաթղթերը, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը 19.02.2019թ. թիվ 97 և 04.03.2019թ. թիվ 154 գրությունները, «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/6/7/1» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/6/7/1» գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 18.02.2019թ. նիստի թիվ 2 արձանագրությունը, «Սիթիդիզայն» ՍՊԸ-ի կողմից 19.02.2019թ. ներկայացված թիվ 23 գրությունը.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կարիքների համար ՀՀ Շիրակի մարզի «Ցողամարգի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դռների և պատուհանների փոխարինման և ՀՀ Շիրակի մարզի Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոցի տանիքի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված շաքարավազի անհատական փաթեթավորման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/6/7/1» ծածկագրով ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) հայտ է ներկայացրել «Սիթիդիզայն» ՍՊԸ-ն:

Ընկերությունը ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N3 հավելվածով՝ ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների

պահանջներին բավարարելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/6/7/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված որակավորման չափանիշների պահանջներին և պարտավորվում է առաջին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում նշված ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել որակավորումը հիմնավորող՝ հրավերով պահանջվող փաստաթղթերը:

«ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/6/7/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Սիթիդիզայն» ՍՊԸ-ն առաջարկել է Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով նախատեսված ՀՀ Շիրակի մարզի Գյումրու մոր և մանկան ավստրիական հիվանդանոցի տանիքի վերանորոգման աշխատանքների իրականացման պայմանագիրը կատարել 8,841,225.6 ՀՀ դրամով:

Հանձնաժողովի 18.02.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Սիթիդիզայն» ՍՊԸ-ն Ընաթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

18.02.2019թ. «Սիթիդիզայն» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ Պատվիարտուն հայտնել է, որ Ընկերությունը «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/6/7/1» ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից, և խնդրել է ծանուցումը ստանալու օրվանից երեք աշխատանքնային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

«Սիթիդիզայն» ՍՊԸ-ն 19.02.2019թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հայտնել է, որ իր կողմից ներկայացված գնային առաջարկի մեջ հայտը պատրաստող մասնագետի անուշադրության պատճառով թույլ է տրվել սխալ, որի արդյունքում 1-ին և 2-րդ չափաբաժինների գների տեղերը խառնվել են, ինչն ակնհայտ երևում է (1-ին չափաբաժնի գինն անհավանական բարձր է, իսկ 2-րդ չափաբաժնի գինն՝ անհավանական ցածր), ուստի Ընկերությունը հրաժարվում է իր ներկայացրած հայտից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք)

• 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի

շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

• 5-րդ մասի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.

- 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ նույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև նույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Նույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

- 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին:

Հրավերի՝

- 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են սույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին

համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

- 7.13 կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը՝ համակարգի միջոցով առաջին տեղը զբաղեցրած մասնակցին ուղարկում է ծանուցում, առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Նույն ենթակետով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և նույն նիստում հանձնաժողովը առաջին տեղը զբաղեցրած մասնակից է ճանաչում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին՝ կիրառելով սույն հրավերի 1-ին մասի 7.13-ից 7.21-րդ կետերով սահմանված ընթացակարգը:

- 7.16 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

- «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/6/7/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Սիթիդիզայն» ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը կազմել է 8,841,225.6 ՀՀ դրամ:

- Հանձնաժողովի 18.02.2019թ. նիստի թիվ 2 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ «Սիթիդիզայն» ՍՊԸ-ն Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

- Պատվիարտուն 18.02.2019թ. «Սիթիդիզայն» ՍՊԸ-ին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը «ՀԾ-ԳՀ-ԱՇՁԲ-2019/6/7/1» ծածկագրով ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, և խնդրել է ծանուցումը ստանալու օրվանից երեք աշխատանքնային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

- «Սիթիդիզայն» ՍՊԸ-ն 19.02.2019թ. Պատվիրատուին ուղղված գրությամբ հրաժարվել է իր ներկայացրած հայտից և գնման գործընթացում իր հետագա մասնակցությունից:

Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Սիթիդիզայն» ՍՊԸ-ն՝ որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը սահմանված ժամկետում չներկայացնելով՝ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորությունը, ինչը հանգեցրել է գնման գործընթացին «Սիթիդիզայն» ՍՊԸ-ի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ առկա է «Սիթիդիզայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված հիմքը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.03.2019թ. թիվ 26/26/3661-19 գրությամբ «Սիթիդիզայն» ՍՊԸ-ին /ՀՎՀՀ 00877485/ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Սիթիդիզայն» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ